№ 122 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆԻՍԻ 8 — 1903 — ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆԻՍԻ 8 № 122

ԵՐԵՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Ձեռագիրները չեն տրվում մի՛միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ ազգ օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակնօրեայ զրոյց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պոլսի լրագիրներից. Սերբիական դէպքերի առիթով. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ կեանքէն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԶՐՈՅՑ

—

Ի՞նչ տպաւորութիւն ստացաք դուք Թաւրիզի անկարգութիւններից։ Ի՞նչպէս հասկացաք այդ անկարգութիւնների բուն պատճառը։

Յաւիտենական անփոփոխ եղելութիւն։ Կոյր, մոլի պահպանողականութիւնը ժամանակի լուսաւոր հոսանքների առջև կատաղած, զինված։

Այսպէս չէ։

Դուք գիտէք, որ անշարժութիւնը, խաւարը անհաչտ ու վրէժխնդիր է։ Դուք գիտէք, որ դարերով խտացած խաւարի մէջ թափանցող իւրաքանչիւր ճառագայթ տանջանք է խաւարը մարմնացնող ամբոխի համար։ Եւ որովհետև այդ խաւարը մասա է, ոյժ է, ուստի նա գնում է խորտակելու, ոչնչացնելու այն ամենը, ինչ այնքան տանջում է նրան։

Աւելացրէք այդ բանի վրա և այն, որ իրողութիւնը տեղի ունի արևելքում։ Այն, որ մահմեդականութիւնը անշարժութիւն է, այն, որ մահմեդականութիւն դաւանող թաթարական ցեղերը սկզբից և եթ անէծք են հանդիսացել քաղաքակրթութեան համար։

Պարզ չէ։ Ապահովապէս կարելի է ասել, որ դուք, կարդալով «Մշակի» մէջ Թաւրիզի անկարգութիւնների մանրամասնութիւնները, սկզբից և եթ, առաջին իսկ տողերից, արտասանել էք դատավճիռը. «Ֆանատիկոսութիւն»։

Ամեն ինչ ասված է այս բառի մէջ։ Հրէչաւոր, սարսափելի բառ։ մենք, մանաւանդ մենք, հայերս գիտենք թէ ինչ զարհուրելի դազան է այդ ֆանատիկոսութիւնը։ Որքան արիւն, որքան արտասունք է նա քամել մեզանից դարերի ընթացքում։ Եւ այսօր էլ նա չէ միթէ մեր հոգեհան հրեշտակը։

Մենք սովորել ենք անուանել մեզ մահմեդական ֆանատիկոսութեան զոհ և ամբողջ տչխարհը վկայում է որ մենք, ճիշտ որ, զոհեր ենք։ Մի դառն, մի անհերքելի ճշմարտութիւն։ Եւ ես ամենևին չեմ ուզում և չեմ կարող ասել թէ դուք, ընթերցող, կարող էք մի բոպէ սխալված լինել։ Ֆանատիկոսութիւն անուանելով այն պատճառը, որից անկարգութիւններ ծագեցին Թաւրիզում, թէև, բարեբախտաբար, առ այժմ անշնաս անկարգութիւններ։

Ա՛չ, այդ պատճառը կայ։ Բայց ես կը ցանկայի, որ դուք ուշադրութիւն դարձնէք մի այլ, աւելի սարսափելի հանգամանքի վրա։

Ի՞նչպէս արտայայտվեց ֆանատիկոսութիւնը։ Ամբոխը, ինչպէս գիտէք, յարձակվեց չորս հայ խանութպանների վրա, ծեծեց նրանց, ցրվեց նրանց խանութները։ Ուրիշ ոչ մի ազդ չը ճնաւեց։ Ամբոխը իր պահանջներն ունէր և այդ պահանջներից մէկի շոշափելի արտայայտութիւնը հայ խանութպանների վրա գործադրած բռնութիւնն էր։

Զոհերը, ուրեմն, դարձեալ հայերն էին։ Բայց ինչ տեսակ զոհեր։ Ահա սարսափելի հարցը։

Խմիչքներ ծախող հայերն են ճնաւոզները։ Մահմեդական ամբոխը չէ ուզում, որ խմիչք ծախողներ լինեն, որովհետև այդ խանութներից խմիչք են առնում և մահմեդականները, որոնց արգելված է դրանց գործածութիւնը։ Առաջին անգամից մենք վրդովվում ենք այս ամբոխային դատողութիւնից։ Եւ իրաւ, չուկայում առևտուր է, և այդ առևտուրը ունի իր զանազան ճիւղերը։ Շուկան տալիս է և կենսական մթերքներ, և թոյն. չուկային պէտք է դիմել ապրելու համար, բայց չուկայից էլ մահ է բերվում շատ անգամ։ Այսպէս է ամեն տեղ, այսպէս է համաշխարհային վաճառականի յատկութիւնը։ Խմիչքը վատ բան է. բայց մի՞թէ լաւ բան է ափիոնը, որ նոյնպէս վաճառվում է փողոցում։ Եւ սակայն այս սարսափելի թոյնի սուսուր մեծամանութեամբ մահմեդականներ են, որոնք երբ ալ հայ վաճառականին հետ գործ չունեն ու միայն յոյնին դիմեն, հրէին խանութը երթան, եւրոպացի ճարտարապետ բերել տան ու ոչ-հայ բժիշկ ուզեն, ան ատեն հայը կը դատապարտուի սովամահ կորստի։ Ու չիտակն ալ բռնելով, Թիւրքը լաւագոյն կը համարի հայուն հետ գործ ունենալ քան թէ ուրիշ ո և է ցեղի հետ. սակայն դէպքերը Թիւրքը խրատեցուցին։ Սուլթանին կողմէն հայոց նկատմամբ բարեկամական ո և է բոյց, մահմեդականներուն շատ կը դիւրացնէ դէպի հայերը մերձենալը։ Գոլիս ու երկիրը ապրող հայերը այս մերձեցման մեծ կարևորութիւն կընծայեն, մանաւանդ յորմէհետէ օտարազգիները սկսած են մեր տեղուանքը իրենք գրաւել։

Տնտեսական շահերէն զատ, վարչական նկատումներն ալ ի նպաստ այդ «բարեացակամութեան» կը խօսին Թիւրք պաշտօնեայները, որոնք հայերը կեղեքելու և տանջելու ըստ բաւականին տրամադիր են՝ իրենց յանդգնութեանը մէջ ոչ չափ կը ճանչնան, ոչ սահման, երբ ապահով են թէ սուլթանին գնահատանքը այնքան աւելի կարժանանան, որքան աւելի կողոպտեն ու չարչարեն հայ ժողովուրդը։ Բայց երբ կասկածեն, թէ Գոլիս «բոլիթիքան» կը փոխուի, ան ատենը խոհեմութիւն կունենանք քիչ շատ զգուշաւոր ըլլալու. ու հայն ալ քիչ մը շունչ առնելու միջոց կունենայ։ Անցեալ աշնան, «Մշակի» մէկ տեղեկութիւնը բաւական ուշադրութիւն դրաւեց։ Հրատարակած էինք թէ Սվազի պաշտօնեայներէ ոմանք հայկական կոտորածի մը պատրաստութիւնները տեսած էին գաղտնապէս, բայց գործը Գոլիս իմացուելով, չարագործութեան դաւադիրները անմիջապէս պաշտօնանկ եղան։ Ենթադրեցէք թէ Երլդզը «ասուտ չը դիտեմ» ըլլար ու կոտորածի ծրագրին անարգել գործադրութիւնը լռելեայն դէմ չէ բողոքում մահմեդական ամբոխը, այլ, ընդհակառակն, ամենամեծ հաճութեամբ գործ է ածում ափիոնը և թունաւորում ու քայքայում է իր մարմինը։

Անիրաւութիւն էր այն բռնութիւնը, որ գործադրվեց հայ խանութպանների դէմ։ Բայց այստեղ միայն կոյր անմտութիւն չենք տեսնում. այստեղ կատաղած ամբոխը ունի իր հոգեբանութիւնը, իր արդարացուցիչ հանգամանքը։

Եւ դա այն է, որ հայը չափազանց շատ է շահագործում մահմեդականի թուլութիւնը դէպի ոգելից խմիչքները։ Քաղցր է արգելված պտուղը և, կաւելացնեմ ես, նաև շատ շահաւէտ։ Պարսկաստանցի հայը գիտէ օգուտ քաղել այդ հանգամանքից։ Եւ օղի է ծախում ոչ միայն օղեվաճառը, այլ և ուրիշ պարապմունքների տէր մարդը, ժամագործը իր խանութում օղի է պահում. ծախում է, օգտվում է։ Այսպէս է դերձակը, այսպէս է մանրավաճառը, այսպէս և ամեն մի արհեստաւոր։ Մահմեդականը գիտէ, որ խմիչք կարելի է ստանալ հայից, ինչ պարապմունքի տէր լինի նա։ Եւ հայը Պարսկաստանում ալկոհոլ տարածողն է։ Հասկանալի է, որ արբեցողութեան մոլութեան դէմ դուրս եկող ամբոխը ամենից առաջ պիտի հայի օձիքը բռնէ։

Բայց իր խանութում օղի վաճառող կօշկակարը, դերձակը, ժամագործը դեռ համեմատաբար անմեղ բաներ են։ Շահը կուրացնում է մարդուն, շահը աւետրի մէջ մտցնում է հազարաւոր զզուելի արարքներ։ Բայց ինչ կասէք, երբ նոյն այդ շահը օղետուն է դարձնում հայ ընտանիքը։ Ի՞նչ կասէք, երբ հայ կինն է իր ընտանիքի մէջ օղեվաճառ հանդիսանում և նրա յաճախորդներն են պարսիկները...

«Մշակի» մէջ անցեալներում շատ անգամ է նկարագրվել այս սոսկալի իրողութիւնը։ Նա գոյութիւն ունի պարսկական շատ քաղաքներում. օղետուն դարձած ընտանիքներ կան ոչ միայն Թաւրիզում, այլ և Թէհրանում։ Փող վատակելու տենչը այն աստիճան ապականել է պարսկաստանցի հային, որ նա բաց է ատում մեծամասնութեամբ մահմեդականներ են, որոնք երբ ալ հայ վաճառականին հետ գործ չունեն ու միայն յոյնին դիմեն, հրէին խանութը երթան, եւրոպացի ճարտարապետ բերել տան ու ոչ-հայ բժիշկ ուզեն, ան ատեն հայը կը դատապարտուի սովամահ կորստի։ Ու չիտակն ալ բռնելով, Թիւրքը լաւագոյն կը համարի հայուն հետ գործ ունենալ քան թէ ուրիշ ո և է ցեղի հետ. սակայն դէպքերը Թիւրքը խրատեցուցին։ Սուլթանին կողմէն հայոց նկատմամբ բարեկամական ո և է բոյց, մահմեդականներուն շատ կը դիւրացնէ դէպի հայերը մերձենալը։ Գոլիս ու երկիրը ապրող հայերը այս մերձեցման մեծ կարևորութիւն կընծայեն, մանաւանդ յորմէհետէ օտարազգիները սկսած են մեր տեղուանքը իրենք գրաւել։

Տնտեսական շահերէն զատ, վարչական նկատումներն ալ ի նպաստ այդ «բարեացակամութեան» կը խօսին Թիւրք պաշտօնեայները, որոնք հայերը կեղեքելու և տանջելու ըստ բաւականին տրամադիր են՝ իրենց յանդգնութեանը մէջ ոչ չափ կը ճանչնան, ոչ սահման, երբ ապահով են թէ սուլթանին գնահատանքը այնքան աւելի կարժանանան, որքան աւելի կողոպտեն ու չարչարեն հայ ժողովուրդը։ Բայց երբ կասկածեն, թէ Գոլիս «բոլիթիքան» կը փոխուի, ան ատենը խոհեմութիւն կունենանք քիչ շատ զգուշաւոր ըլլալու. ու հայն ալ քիչ մը շունչ առնելու միջոց կունենայ։ Անցեալ աշնան, «Մշակի» մէկ տեղեկութիւնը բաւական ուշադրութիւն դրաւեց։ Հրատարակած էինք թէ Սվազի պաշտօնեայներէ ոմանք հայկական կոտորածի մը պատրաստութիւնները տեսած էին գաղտնապէս, բայց գործը Գոլիս իմացուելով, չարագործութեան դաւադիրները անմիջապէս պաշտօնանկ եղան։ Ենթադրեցէք թէ Երլդզը «ասուտ չը դիտեմ» ըլլար ու կոտորածի ծրագրին անարգել գործադրութիւնը լռելեայն թոյլատրէր, տարակոյս չը կայ թէ ոչ միայն Սվազը արիւնի մէջ պիտի լողար, այլ և ուրիշ տեղուանք ալ Թրքական իշխանութիւնները իրենք իրենց գլխուն մանր ու խոշոր ջարդեր պիտի սարքէին, բարձրագոյն հաւանութեան արժանանալու ապահովութիւնը ունենալով։ Անգիր հոն չէ, թէ Երլդզը ինչ նկատումներ դրդռած խափանեց նոր կոտորածներու խարհուրդները, այլ՝ կարեորը այն է թէ նահանգային պաշտօնեայները սուլթանին տրամադրութիւնները գիտնալով, չեն համարձակիր իրենց նախաձեռնութեամբը հայերը կոտրել, առանց Գոլէն որոշակի հրամաններու։ Եւ այդ հրամաններն ալ միշտ դիւրութեամբ չեն տրվիր։

Այսպէս կը պատճառաբանեն ամեն անոնք, որ զոհ կը մնան երբ սուլթանին դէպի հայերը բարեացակամութեան մէկ հաւատիքը կը տեսնեն. ուստի և կը հաւատան թէ այս անգամ ալ, պատրիարքարանին պաշտօնէութեան տրուած չքանչանները մահմեդականութեան աչքին պիտի հաւատեն հայոց նկատմամբ իրենց Խալիֆային բարեացակամութիւնը, ինչ որ պիտի կրնայ պաշտօնէից բռնաբարութիւնը քիչ մը չափաւորել, ու մեղմացնել մահմեդականներու կասկածները և ատելութիւնը։

—

Իսկ այդ չարհաճաչխութեանց լուրերէն տակնուվրայ եղողները իրենց երկիրները կը յայտնեն այնպիսի նկատումներով զորս բոլորովին կամ մասամբ անտեղի համարել դիւրին չէ, գոնէ մինչև որ Հայաստանէն որոշ տեղեկութիւններ չը հասնին։ Արդ, այս յոռետեսները կը վախնան, և՝ շատ իրաւամբ իսկ, որ գուցէ անգամ մը ևս «ոչխարներուն ոսկորներէն մանեակներ շինած, հովիւին վզէն կը կախեն», ինչպէս երբեմն «Հայգոյժ»-ը կողբաց։ Անցեալ մը, կամ թէ՝ շատ մը անցեալներ, կրնան իրաւունք տալ անոնց, որոնք կը կասկածին, թէ առատաձիր նշանաբաշխութեանց ետևէն, շատ չանցած գուցէ լսուին արդէն կատարուած կոտորածներու գուժերը։

Ու արդարև, դիտելի է թէ քանի մը տարիէ հետէ, ամեն ատան երբ Եւրոպայի խորհրդարանները փակուելու վրա են, մի և նոյն ատենները Հայաստանէն՝ մասնաւորապէս Տարօնի սահմաններէն լուրեր կը հասնին որ գարնան սկիզբները այս ինչ այն ինչ տեղը կոտորած պատահեր է։ Եւ այդ միջոցին, ուշագրաւ անցքեր ալ տեղի կունենան Գոլիս։ Գուժերուն ժամանումէն առաջ, պատրիարքը արդէն հրաժարական կուտայ, և զայն փառաւորապէս ալ ետ կառնէ, որով նոր հրաժարականի մը պէտք չի մնար, երբ դառն իրողութիւնները երևան կուգան։ Եւ սակէ զատ, ատիճաններու բարձրացումներ կը կատարուին, պատուանշաններ կը բաշխուին։ Արդ հիմակ ալ, թէև պատրիարքի հրաժարականի խնդիր չը կայ, որովհետև պատրուակ մը չի ներկայանար, բայց պատուանշանները լիաբուռն կը տրուին, և՝ շատ բարձր ատիճաններով։ Ու մինչև իսկ «բարձրագոյն մեծարանքի» կարժանանան անոնք, որ պատրիարքին ընդդիմադիրներն էին, ինչպէս՝ Յովհաննիսեան ու Մանկունի եպիսկոպոսները։ Ինչու չը վախցուի որ նշաններուն մեծութիւնը և առատութիւնը, աղէտներուն մեծութեանը և առատութեանը չափին համապատասխանէ։

Ինչ ինչ դէպքեր այս վախերը հաստատելու կրնան ծառայել, գոնէ առժամաբար։ Ցիշեցնենք։

Հեռագիրները տեղեկացուցին, թէ Թիւրք կառավարութիւնը Պայազիտի կողմերը «շատ ուժով միջոցներ» ձեռք առած է, որպէս զի բարեկարգութիւնը չը խանգարուի, տահմանագլխէն խումբերու անցքին հետևանքով։ Եւ ոչ ոք չիյտէ թէ «շատ ուժով միջոցներ» բացատրութիւնը Թիւրքերուն բերանին մէջ ինչ պայմանադրեալ նշանակութիւն ունի։

լրբութիւնը, ապականութիւնը, պղծութիւնը և ոճիրը։

Ինչ է սա, եթէ ոչ կատարեալ դժոխք։ Դոկտոր Փաշայեան գտնում է, որ պարսիկների բողոքները իրաւացի են և Թաւրիզի հայերը պէտք է մտածեն այդ չարիքը վերացնելու մասին։ Եւ դուրս է գալիս, որ պարսիկ մոլեռանդ ամբոխն է, որ հայ ընտանիքի սրբութեան, պատուի, մաքրութեան նախանձախնդիր է հանդիսանում։ Նա, ի հարկէ, չէ էլ մտածում մեր մասին. նա միայն ուզում է, որ պարսիկ սրիկաների համար տեղ չը լինի հայ ընտանիքներում. ուզում է, որ կեղտի ու ապականութեան փոսեր չը լինեն, ուր հասարակութեան տականքները թաւալվում են արատների մէջ։ Չը քննենք այն հարցը, թէ որքան ազդու է այդ միջոցը՝ սրիկայութիւնն ու պոռնկութիւնը վերացնելու համար։ Չը մտածենք սրիկաների փրկութեան մասին։ Մենք աւելի մեծ ցաւ ունենք, մենք կարմրելու, ամօթից փչրվելու աւելի տանջալից առիթներ ունենք։

Մտածեցէք։ Մահմեդական ֆանատիկոս ամբոխը գալիս է իր կատաղութեամբ մեզ էլ օգնելու։ Նա օգնում է կողմնակի կերպով, օգնում է ապրատի ազդելով մեզ։ Նշանակում է, որ եթէ ամբոխը հանդարտ նստէր իր տանը, թէ նրան ոչինչ անհանգստութիւն չը պատճառէր սրիկաների հարցը, գինետուն դարձած հայ ընտանիքները պիտի շարունակէին ամենայն բարեյաջողութեամբ զարգանալ ու մեծանալ, շատացնել իրանց թիւը...

Մրպիսի անկում, որքան անյատակ դժբախտութիւն։ Եւ այսպէս ենք մենք, արևելքի մէջ քաղաքակրթութիւն տարածելու կոչվածներս։ Մենք պէտք է մտածենք, որ եթէ չը բժշկենք մեր ցաւերը, եթէ չը չափաւորենք մեր շահամոլութիւնը, մեզ կը ծեծեն, մեզ կը կողոպտեն, կը կոտորեն։ Ով է մեզ չափ ու սահման ցոյց տալիս, ով է բարոյական սանձեր դնում մեր առջև։ Պարսիկ ժողովուրդը, տգէտ, դարերով անշարժ մնացած խուժանը։

Խոստովանենք, որ ամօթով ծածկված ենք ոչ միայն այդ խուժանի, այլ և մեր աչքի առջև։ Թող չը լինի պարսիկ խուժանը, թող ոչ մի բռնութիւն տեղի չունենայ, ոչ մի ցոյց չերևայ փողոցում։ Թող ազատ ու միանգամայն անդորր լինի հայի կեանքը Պարսկաստանի քաղաքներում։ Այս բոլորը չի փրկի մեզ։ Եւ գինետուն դարձած հայ ընտանիքը կը մնայ այն հրէշը, որ կը կլանէ մեզ ամբողջովին, կը թաղէ անդունդների մէջ։ Եւ եթէ մենք հասկացողութիւն ունենք, թէ ինչ է փրկութիւնը, ինչ է բարոյական կենդանութիւնը, պիտի զինվենք այդ հրէշի դէմ, պիտի ազատենք նրա ճանկերից հայ ընտանիքը։

Մեր հարիւրաւոր արատների վրա աւելանում է և այս սոսկալի խոցը։ Բայց չը վհատվենք։ Չընկճվենք։ Թող բաց լինեն մեր վէրքերը, թող ամեն ժամ մենք տեսնենք նրանց զզուելի կերպարանքը, որպէս զի մեզանում աւելի և աւելի բորբոքվի նրանց բժշկելու տենչանքը։

Վրդովվեցէք, ընթերցող, մինչև ձեր սրտի խորքը վրդովվեցէք, որ Պարսկաստանում մահմեդական սրիկաները հայ ընտանիքի ծոցում են գտնում իրանց շահատակութիւնների ապարէզ։ Զզուեցէք, որ օղիի վաճառքը այդ ընտանիքի մէջ է մտցնում ամեն տեսակ կեղտ, ապականութիւն։ Բայց եթէ ձեր վրդովմունքը, ձեր զզուանքը միայն մի ժամանակաւոր տրամադրութիւն պիտի լինի, եթէ նա պիտի ձեզ թուլութիւն և յուսահատութիւն պատճառէ, իմացէք, որ գինետուն-ընտանիքը երբէք չի փակվի, երբէք չի չքանայ, այլ, ընդհակառակն, աւելի և աւելի բաց կանէ իր հրէշաւոր բերանը և աւելի մեծ թւով զոհեր կը կլանէ։

Կամք ունենանք, որ անհետանայ այդ հրէշը,— և նա կանհետանայ։ Պահանջենք պարսկահայից, որ նա սրբէ իր ճակատից ամօթի և մահացման նշանը։ Բայց պահանջենք ոչ թէ անէծքով ու պատժով, այլ եղբայրաբար, օգնելով, ձեռք մեկնելով։

Ամեն դժբախտութեան պատճառը տգիտութիւնն է։ Օգնենք պարսկահային, որ նա տգէտ չը մնայ։ Այնուհետև նա դժբախտ էլ չի լինի...

Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 2-ին

Ժողովրդական թատրոնի հայկական սէկցիան յայտնում է իր խորին շնորհակալութիւնը պ. Ռոստոմեանին և այն բոլոր անձանց, որոնք նուիրել են պ. Ստ. Եարգուլեանի իսնջոյքում յօգուտ նոյն թատրոնի 52 բուբլի։

Նախագահ սէկցիայի՝ Ն. Աբրահամեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք յայտնել էինք, որ պրոֆէսոր Գ. Խալաթեան դիտաւորութիւն ունէր Թիֆլիսում խորհրդակցութիւն ունենալ գրական գործողների հետ մի գրական ձեռնարկութեան առիթով։ Այդ խորհրդակցութիւնը կայացաւ ուրբաթ, յունիսի 6-ին։ Ժողովված էին գրականութեամբ պարապվող անձինք։ Խալաթեանց զեկուցեց, որ Մոսկվայում դիտաւորութիւն կայ կազմակերպել գեղարուեստական և պատմական-կենսագրական հրատարակութիւնների մի կանոնաւոր գործ և որ ցանկալի է այդ առիթով լսել ներկայ եղողներից կարծիքներ։ Ժողովականների մէջ եղան առաջարկողներ, որ հրատարակութեան գործին ձեռնարկողները ընդարձակեն իրանց ծրագիրը, մտցնելով նրա մէջ և ուրիշ տեսակ հեղինակութիւններ։ Ժողովականները, համակրութեամբ վերաբերվելով առանձին առաջարկութիւններին, այնուամենայնիւ եկան այն եզրակացութեան, որ պէտք է ձեռնարկողներին թողնել հրատարակութիւնների ծրագրի որոշելը և իրանց կողմից արին մի շարք տեխնիկական ցուցումներ։ Երբ որ գործը աւելի որոշ և չշափելի արտայայտութիւն կը ստանայ, մենք կը յայտնենք այդ մասին մեր ընթերցողներին։

—

Յունիսի 7-ին և 8-ին Թիֆլիսում տեղացին երկարատև անձրևներ, որոնք չափազանց հովացրին եղանակը։ Ամառվայ սկիզբը ընդհանրապէս այս տարի խիստ հով է անցնում և Թիֆլիսեցիները չեն շտապում դէպի ամարանոցները։

—

Մեզ խնդրում են հաղորդել հետևեալը. «Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի թոյլտութեամբ՝ Լոխվիցկայա—Սկալօնի մասնաւոր գիմնազիային կից Պետերբուրգում 1903 թուականի սեպտեմբերի 15-ից կը բացվեն կանանց գիմնազիային կից Պետերբուրգում 1903 թուականի սեպտեմբերի 15-ից կը բացվեն կանանց բնապատմական-գիտական երկամեայ կուրսեր։ Կուրսերի նպատակն է նախապատրաստել գիմնազիաների այն աշակերտուհիներին, որոնք ցանկութիւն ունեն շարունակելու իրանց ուսումը կանանց բժշկական ինստիտուտում, նոյնպէս և բուսականաչափ նախապատրաստութիւն տալ այնպիսիներին, որոնք ցանկութիւն ունեն բնապատմական գիտութիւնների դասատուութիւն յանձն առնել զանազան դպրոցներում։ Ներկայումս աշակերտուհիները աւարտում են իրանց ուսման ընթացքը գիմնազիաներում և ինստիտուտներում 17—18 տարեկան հասակում, այն ինչ մտնել բժշկական ինստիտուտ կարող են միայն 20 տարեկան ժամանակ, համաձայն ինստիտուտի կանոնների. այսպիսով նրանք 2—3 տարի ազատ ժամանակ ունեն և կարող են օգուտ քաղել այդ ժամանակից՝ աւելի հիմնաւոր տեղեկութիւններ ձեռք բերելով ֆիզիկայից և մաթեմատիկայից, ինչպէս նաև բնապատմական այլ գիտութիւններից։ Բժշկական ինստիտուտը մրցողները այժմ այնքան քիչ նախապատրաստութիւն ունեն մաթեմատիկական և մասնաւոր բնապատմական առարկաներից, որ շատ անգամ ստիպված են լինում կամովին դուրս գալ բժշկական ինստիտուտի առաջին կուրսից՝ դժուարութիւններ կրելով իւրացնելու այն առարկաները, որոնք աւանդվում են այդ կուրսում։ Նոր հիմնվող բնապատմական կուրսերում կաւանդվեն հետևեալ առարկաները. 1) կենդանաբանութիւն, որ կը դասաւանդէ Պետերբուրգի համալսարանի պրոֆէսոր Շիմկեվիչ, 2) բուսաբանութիւն և բակտերէօլոգիա, կը դասաւանդեն բժշկական ինստիտուտի պրոֆէսոր Նադսոն և նրա ասիստենտ Արցիխովսկիյ. 3) քիմիա, կը դասաւանդէ կանանց բժշկական ինստիտուտի պրոֆէսոր Մալչեվսկի, 4) ֆիզիկա, կը դասաւանդէ պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆէսոր Սկոռեցկին, 5) մարդակազմութիւն և բնախօսութիւն — Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ Տուբ, 6) հանքաբանութիւն և երկրաբանութիւն— Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ Ֆոն-Պէտց, 7) մաթեմատիկա—պոլիտեխնիկական ինստիտուտի դասատու Ադամով, 8) լատինական լեզու՝ այն չափով, որքան պահանջվում է բժշկական ինստիտուտ մտնելու համար—գիմնազիայի դասատու Շմիդտ։ Կուրսերում ընդունվում են այն անձինք, որոնք իրանց ուսման ընթացքն աւարտել են ինստիտուտներում, գիմնազիաներում, կանանց թեմական ուսումնարաններում կամ առանձին քննութիւն տալով ստացել են տնային ուսուցչուհու վկայական։ Վճարը կէս տարվայ համար—75 բուբլի, իսկ լատիներէնի հետ միասին—100 բուբլի։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ այսօր, կիրակի, յունիսի 8-ին, Թիֆլիսի հակա-ալկոհոլական ընկերութեան Հաւլաբարի թատրոնում, տպագրական աբհեստի աշխատաւորներից կազմված թատերասէրները կը տան մի ներկայացում ռուսերէն, հայերէն և վրացերէն լեզուներով։ Ռուսերէն կը խաղացվի «Въ гостяхъ безъ хозяина», վրացերէն՝ «Ինչ տեսել ես, էլ չես տեսնի» և հայերէն «Օրթաճալու քէֆը» պիէսները։ Սկիզբն է առաւօտեան 11 ժամին։ Տեղերի գները 10 կոպէկից մինչև 90 կոպէկ։

—

Թիֆլիսից դէպի ս. Դաւթի սարի գլուխը ֆունիկուլեօր չինելու նպատակով կազմակերպված ընկերութիւնը, որի կանոնադրութիւնը մօտ ժամանակներումս հաստատվեց կառավարութիւնից, մի քանի ժողովներ ունեցաւ վերջին օրերում, որոնց մասնակցելու հրաւիրված էին ս. Դաւթի սարահարթի վրա հողաբաժին ունեցող անձինք։ Ընկերութեան ղեկավարները առաջարկում էին այս վերջիններին գրվել ընկերութեան ակցիաներին և այդպիսով նպաստել ֆունիկուլեօրի չինութեան գործին։ Ժողովների ժամանակ տեղի ունեցած վիճաբանութիւններից երևաց, որ ինքը՝ ընկերութիւնը ոչ մի հողաբաժին չունի ս. Դաւթի սարի վրա, եթէ հաշվելու չը լինենք հողի այն չնչին կտորը, որի վրա պէտք է շինվի ֆունիկուլեօրի վերին կայարանը, ուրեմն և ընկերութիւնը զուրկ է հնարաւորութիւնից՝ տնկել ընդարձակ այգի, շինել ամարային թատրոն և ընդհանրապէս յարմարութիւններ տալ այն անձանց, որոնք կը կամենային Թիֆլիսի ամարային շոգերից մի երկու ժամ ազատվելու նպատակով՝ օգուտ քաղել ֆունիկուլեօրից ս. Դաւթի սարի գլուխը բարձրանալու համար։

Նաև, կը վախենանք, որ Մակեդոնիոյ դէպքերը Փոքր-Ասիոյ մահմեդականներուն մէջ ալ գրգռում առաջ բերած ըլլան, չատ ընականաբար ալ, տուժողները միշտ հայերը ըլլան։

Մօտաւոր ապագայ մը ցոյց պիտի տայ, թէ օրուան չքաւոր ներու բաշխումին առթիւ Հայաստանի կացութիւնը լաւ ըմբռնողները որոնք եղած են. յոռետեսները թէ լաւատեսները։

—

Եթէ Հայաստանի համար օրտադողներ կը տիրեն, բայց գոնէ Կիլիկիոյ համար անմիջական մեծամեծ վտանգներու երկիւղը չը կայ։ Կիլիկեայ հայութիւնը, Զէյթունը գլուխ ունենալով, հեռատես զգուշաւորութեամբ կը վարուի։ Սահակ կաթողիկոսն ալ կերևի թէ ծրագրած է ժողովրդին բարօրութեանը հետամտիլ, սիրաշահելով Թիւրքիոյ կառավարութիւնը, փոխանակ եւրոպացիներու ճառախօսութեանց վրա յոյս դնելու։ Կաթողիկոսը մօտերս Պոլիս պիտի երթայ և սուլթանին պիտի ներկայանայ։ Այս ուղևորութիւնը, համաձայնութեան կռուան մը պիտի պատրաստէ։ Խապայեան սրբազանը խոհական մարդ մը կերևի, առանց երևակայութեան դիմելու, պիտի ջանայ ժողովուրդը ներքնապէս բարեկարգելով, ինքնազարգացման չնորհիւ կամաց-կամաց հանգստացնել զայն։

Ամեն անոնք որ այս միջոցիս Զէյթունի շրջանակին համար հոգածու ըլլալ կը թուին կրթարանի հաստատութեամբ, բժիշկի առաքմամբ, արհեստանոցի ու հիւանդանոցի հիմնարկութեամբ, այդ բոլոր խնամատարները տարաբոյս չը կայ որ չեն կրնար բան մը ընել առանց կաթողիկոսին աջակցութեանը։ Եւ որովհետև կաթողիկոսը Թիւրքիոյ կառավարութեան հետ շատ հաշտարար քաղաքականութեամբ կուզէ նումէն կրնանք փրկուիլ, բայց բարոյական կործանումը այլապէս սպառնալից է։ Քանի մը տարիէ ի վեր է որ լքումի հիւանդութիւնէն բռնուած ենք, և սակայն ժողովրդին մէջ դեռ ուժ կայ, կորով կայ. բարակ ցաւին դեռ առաջին ստիճանին մէջն ենք, և փրկութիւնը շատ հնարաւոր է։ Մասաւորականներն են որ այդ բժիշկի պաշտօնը պիտի կատարեն, ու մասաւորական ըսելով չեմ հասկնար «բարձր ուսում» ստացողներ—ի հարկէ «բարձր ուսում» բացատրութիւնը համեմատական նշանակութեամբ է։—Երկրորդական չափաւոր կրթութիւն մը ստացած երիտասարդներ երկրին մէջ պիտի կրնան հրաշագործներ ըլլալ, ոչ ոք խրտչեցնելով։

Մխիթարեան ընդհանուր ժողովին առթիւ երկրէն եկող վարդապետներէ ոմանց հետ երբ կը խօսակցէինք «Մշակ»-ի մէջ հրատարակուած «առաքելութեանց» խնդրին վրայ, կըսէին, «թէ շատ տեղուանք—նոյն իսկ Պոլսոյ մօտերը—գեղացի ժողովուրդները իրենց կը դիմեն խնդրելով որ գան քարոզ մը խօսեն, հոգևոր մխիթարութիւն տան։ Իրենց ոչ նայող կայ, ոչ այցելող։ Ու երբ այս վարդապետները ցաւած սրտով այդ գեղերը կայցելեն, ահա յանկարծ վրդովումը կը տիրէ հեռաւոր վայրերը իսկ։ Բողոքներ կը լսուին թէ «հաւատոյ տարածումն» կրնեն։

Եկեղեցականներ ունենալու համար Արմաշ դպրէվանք մը բացուեցաւ, և առաջին արդիւնքները ունեցանք. բայց ինչ որ ժամանակաւ կը վախնայինք, ահա կիրականանայ, գոնէ մեծ մասամբ։ Նոյն իսկ Պոլիս սկսած են մտածել թէ վերջը ինչ պիտի ըլլայ։ Բարեկամ մը ինծի կիմացնէ, թէ «Դուրեան Եղիշէ եպիսկոպոսը, որ դպրէվանքին տեսուչն է հիմակ, վերջերս Պոլիս գալով այցելեր է Աբիկ էֆէնդիին ու, անոր բնակարանէն մեկնած պահուն դէմքը շատ այլայլած տեսեր են։ Կերևի թէ Աբիկ էֆէնդին խիստ վարմունք ունեցեր է հանդէպ եպիսկոպոսին»։

Աբիկ էֆէնդին դպրէվանքի հիմնադիրներէն է ու խնամակալութեան ատենապետը։ Կրօնաւոր հին հայ մը, ազգին ու եկեղեցիին օգուտը ուզող, բայց ջերմ պահպանողական։ Այս էֆէնդին տարիներ առաջ սաստիկ բարկացաւ երբ «Հայրենիք» օրաթերթին մէջ կը քննադատուէր Օրմանեանի տեսչութեամբ կառավարվող Արմաշեան հաստատութիւնը, ու մինչև իսկ կառավարութեան միջոցաւ «Հայրենիք»-ը լռեցնել ուզեց։ Դպրէվանքի ուղղութեան պաշտպանն էր Բիւզանդ Քէչեան «Արևելք»-ի մէջ։ Արդ հիմակ մի և նոյն մարդերը վրդովեալ են, և կը վախնան որ դպրէվանքի պտուղները փոխանակ հայ եկեղեցին զօրացնելու, փոխանակ ժողովուրդը աւելի հաւատով ընելու, փոխանակ ազգին էական պէտքերը հոգալու, ընդհակառակը եկեղեցին տկարացնելու, ժողովրդին հաւատքը պակսեցնելու, ազգին կենսական պէտքերը մոռացութեան մատնելու քայքայումի գործը կատարելու վրայ են։ Այդ վարդապետներուն գրչէն ելած կարգ մը հրատարակութիւններ, որոնք աշխարհականներուն իսկ ներելի չէին համարեր Պոլսոյ պահպանողականները, ահա ինչ որ յուզում առաջ կը բերէ։ Բայց այն կրթութեամբը որ Արմաշու մէջ կը տրուէր, չը մոռանալով նաև ուսուցիչներն ալ, կարելի էր տարբեր արդիւնք ապասել։

Ահա մոռահոգութեան առարկայներ ալ զորս քննելու պէտք ունինք։

***

ժողովը որոշեց մի ընդարձակ հողաժաժին գնել այն անձերից, որոնք մեծ հողաբաժիններ ունեն այժմ այդ տարի վրա։ Այս նպատակով ընտրված մասնաժողովը նորերուստ բանակցութիւններ սկսեց հողատէրերի հետ, որոնցից մէկը—Արզումանեան—«Тифл. Листокъ» լրագրի ասելով, պահանջեց իր հողաբաժնի համար 33,000 ռուբլի, այսինքն 8 ռուբլի իւրաքանչիւր սաժէնից, այսինքն մի դին, որ քանչիւր նապատիկ աւելի արժէ գնից։ Դժբաղդաբար հողերի սպեկուլեացիան վերջին ժամանակ թէ Թիֆլիսում և թէ նրա շրջակայ ամարանոցներում ընդունել է ահագին չափեր. իւրաքանչիւր սպեկուլեանտ աշխատում է գոնէ ոչ մէկին՝ մէկ, այլ մէկին՝ տասը, քսան աշխատել։

—

Թիֆլիսի քաղաքագլուխ իշխան Ն. Վ. Արղութեան, երէկ, յունիսի 7-ին, վերադարձաւ Թիֆլիս Պետերբուրգից, ուր նա գնացել էր մասնակցելու մայրաքաղաքի հիմնարկութեան յօբելեանական հանդէսներին, որպէս Թիֆլիսի դումայի ներկայացուցիչ։

—

ԿՕՋՈՐԻՑ մեզ գրում են. «Այստեղ մի չարաթից աւել է, որ պարբերաբար անձրևներ են գալիս և միշտ կարկտահան։ Մինչև ընկոյզի չափով կարկուտ եկաւ և երևի շրջակայ գիւղերի ցանքներին բաւական վնասներ հասցրեց։ Շրջակայ լեռները ծածկված են ձիւնով։ Ամարանոց եկողներ դեռ չը կան»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻՑ

—Մուշի պատրիարքական փոխանորդ Տ. Խոսրով վարդապետ կրկին գրութեամբ մը նրկարագրելով Մալազկերտի և Պուլանըգի երկրաշարժին պատճառած աղէտները և ժողովրդեան ունեցած թշուառութիւնը, և միւս կողմէ յայտնելով թէ վարուցանի ժամանակը հասած է և ժողովուրդը կը կարօտի անմիջական օգնութեան, խնդրած է որ փութով նրպատաս ղրկուի։ Պատրիարքարանը, ինչպէս Կարնոյ երկրաշարժին ատեն, նոյնպէս հիմայ անշուշտ բացառիկ կարգադրութիւն մը պիտի ընէ բարեսէր անձերու նպաստ ստանալու համար, որովհետև Մալազկերտի երկրաշարժը բաղդատելով Կարնոյ երկրաշարժին՝ աւելի ծանր եղած է։

—Կիւմշեան ժառանգութեան մասին Քաղաքական Ժողովոյ որոշմանց մէջ ինչպէս յիշուած է, երէկ, ի ներկայութեան Եուսուֆեան էֆէնդիի, Ղալաթիոյ խորհրդարանին մէջ բացուեցան հանգուցեալին Մարսիլիոյ հիպատոսին կողմէ կնքուած տետրակները և թուղթերը, որոնք արտաքին գործոց նախարարութեան կողմէ պատրիարքարան յանձնուած էին։ Այս տետրակներուն մէջ ճշդութեամբ և որոշապէս նշանակուած են հանգուցեալին ունեցած գումարները և պահանջները. և որովհետև յատուկ վագֆնամէկով ազգային հաստատութեանց 10,000 ոսկի կտակած է, ժառանգորդները փափաք յայտնած են, որ գոյքերը ատ ի Պոլիս ցուցակագրուին և վարչութիւնը ներկայացուցիչ մը ունենայ նոյն գործողութեան կատարման պահուն։ Ուստի ներկայ էին հանգուցեալին քեռորդին Մանուկ էֆէնդի Արղեան, եղբօրորդիները Մատթէոս և Սարգիս Կիւմշեան էֆէնտիները, ծանօթ փաստաբան Յակոբ էֆէնտի Յակոբօֆ՝ որ ժառանգորդաց կողմանէ փոխանորդութիւն ունի, նոյնպէս փոխանորդ Կիւրեղեան Գէորգ էֆէնդի, Ղալաթիոյ խնամակալութեան կողմէ Հարենց և Մուրատեան էֆէնդիները։ Երէկուան այս գումարման մէջ մի առ մի ցուցակագրուեցան տետրակները, թուղթերը և հանգուցեալին անհատական թղթակցութիւնները, և արտօնուեցան ժառանգորդները սկսիլ հաշուետումարներու քննութեան, որ տակաւին մէկ քանի նիստեր պիտի գրաւէ։ Հանգուցեալին ազգին կտակած և վագֆ ըրած գումարին վճարման եղանակին մասին բնականաբար կարելի է որոշում տալ այս հաշուետումարներու և թուղթերու քննութեանց լրանալէն ետքը, որովհետև այդ վագֆնամէին տրամադրութեան համեմատ կտակեալ գումարը որոշ տեղ մը ձգուած չէ կրնուի, այլ իր թողած ընդհանուր հարստութենէն պիտի հոգացուի։

—Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը տակաւին որ և է կարգադրութիւն չէ ըրած անհովիւ վիճակներու առաջնորդներ նշանակելու համար։ Զի գիտցուիր տակաւին թէ ինչ կերպով պիտի նշանակուին առաջնորդները. ուզղակի կաթողիկոսական աթոռէն թէ տեղական ընտրութիւններով։ Սակայն ինչպէս տեղեկութիւն կուտան մեզ Սիսէն, Տ. Սահակ կաթողիկոս մտադիր է եղեր կաթողիկոսական աթոռէն տրուած եռապատիկ ցանկի մը վրա տեղական գաւառ. ժողովներու միջոցաւ կատարել ընտրութիւնը, ինչպէս կըլլայ արդէն պատրիարքարանի յարակից վիճակներու մէջ։ Կարևոր վիճակներ՝ ինչպէս Հալէպ, Ատանա, Մարաշ, Մալաթիա՝ առանց առաջնորդի կը մնան. մտադրութիւն կայ նաև Այնթապ առաջնորդութիւն ընել, քանի որ ակէ առաջ ալ այդ կողմերէն պատրիարքարան նոյն մտաք դիմում եղած, և պատրիարքարան նոյն պատասխան տրուած էր որ մինչև նոր կաթողիկոսի մը ընտրութիւնը պէտք է յետաձգել այդ դիմումը։ Կը լսենք թէ մէկ քանի եպիսկոպոս և վարդապետներ որոնք պատրիարքարանի իրաւասութեան տակ պաշտօն վարած են գաւառներու մէջ, պատրաստակամութիւն յայտնած են Տ. Սահակ ս. կաթողիկոսի՝ իր իրաւասութեան տակ պաշտօն ստանձնելու Կիլիկիոյ վիճակներուն մէջ։

Ինչպէս քանիցս գրած ենք այս տիւնակներուն մէջ, այս տարի կը կատարուի Ս. Էջմիածնայ հաստատութեան 1600-ամեակը, և այս առթիւ հանդիսաւոր արարողութիւններ տեղի կունենան Մայր Աթոռոյ մէջ։ Ինչպէս երէկուան Խառն Ժողովոյ որոշմանց շարքին մէջ հրատարակուած էր, Ն. Ս. Օծութիւնը կը փափաքի և կը հրամայէ որ այս հանդէսը կատարուի նաև բոլոր հայ եկեղեցիներուն մէջ, և բաց այնմ ժողովոյ որոշմամբ ղրկուելիք շրջաբերականներուն մէջ պիտի չեշտուի պէտք եղած եկեղեցական հանդիսութեանց կարգն ու սարքը։ Պատշաճ կըլլայ հարկաւ երբ պատուիրուի որ նոյն օրը ամէն եկեղեցւոյ մէջ քարոզիչ եպիսկոպոս ու վարդապետներ և կամ աւագերէցներ իրենք պատարագեն և օրուան հանդէսին հոգևոր նշանակութիւնը բացատրեն։ Որոշուած է այս շրջաբերականներէն ուղղել նաև գաւառները, այն տեղերը մանաւանդ ուր մինչև որոշեալ օրը (յունիս 8) կրնայ հասնիլ։ Ս. պատրիարքը նոյն օրը Մայր եկեղեցւոյ մէջ պիտի պատարագէ իբրև Պոլսոյ թեմին արքեպիսկոպոսը։

(«Սուրհանդակ»)

ՍԵՐԲԻԱԿԱՆ ԴԷՊԵՐԻ ԱՌԻԹՈՎ

VII

Սերբիական կուսակցութիւնների այս հակիրճ նկարագիրը տալուց յետոյ դառնանք այժմ քաղաքական դէպքերին և տեսնենք, թէ այդ կուսակցութիւնների շնորհիւ ինչեր կատարվեցին սերբիական գահի շուրջը։

1868—1872 թ. Ռիստիչի ազատամիտ կուսակցութիւնն էր իշխանութեան ղեկավարը, ուստի և նա ամեն կերպ աշխատեց անել այն, ինչ որ ներշնչում էր իր ծրագիրը։ Բայց 1872 թ. Միլանը չափահաս դարձաւ և գահ բարձրացաւ և իսկոյն հեռացրեց ազատամիտներին և իրան մօտեցրեց պահպանողական կուսակցութեանը։ Սկսվեց փոթորկալի դրութիւն։ Ներքին խռովութիւնները և արտաքին անընդհատ հանգամանքները կամաց-կամաց հալ ու մաշ էին անում խղճուկ Սերբիային և աւելի ու աւելի սատակացնում էին ժողովրդի դժգոհութիւնը Միլանի դէմ։

Նրա թագաւորութեան ժամանակ միայն երկու նպաստաւոր դէպք տեղի ունեցան—երկուսն էլ Ռուսաստանի շնորհիւ։ Ռուս-Թուրքական պատերազմից յետոյ Սերբիան լայնացրեց իր սահմանները, իսկ 1882 թ. հաստատակ «իշխանութիւնից» անկախ «թագաւորութիւն» դարձաւ։

Սակայն այդ բարեյաջող դէպքերն էլ չը կարողացան ոչնչացնել ընդհանուր դժգոհութիւնը, որը իր գագաթնակէտին հասաւ այն ժամանակ, երբ սերբ-բուլգարական պատերազմի ժամանակ Սերբիան ամօթալի պարտութիւն կրեց։ Բոլորը մեղադրում էին Միլանին։ Իսկ վերջինս առանց ուշք դարձնելու այդ ամենի վրա, շարունակում էր ճնշել ժողովրդին, սկուպշչինայի իրաւունքները սահմանափակելով, տնտեսական—սոցիալական կեանքը ծանրացնելով։

Այլ ևս տատանվել չէր կարելի, հարկաւոր էր կարուկ միջոց, որին և դիմեց սկուպշչինան։ Նա 1888 թ. որոշեց ընդարձակել ժողովրդի իրաւունքները, և բոլորովին վերացնել թագաւորի իրաւասութիւնը սկուպշչինայի անդամներ նշանակելու վերաբերմամբ։ Այդպիսի սահմանադրութիւնը մեծ վիրաւորանք էր Միլանի համար, ուստի նա հրաժարվեց գահից (1889 թ.)։

Նրա որդին—Ալէքսանդրը անչափահաս էր, ուստի հիմնվեց ժամանակաւոր կառավարութիւն ազատամիտ Ռիստիչի նախագահութեամբ։ Սակայն դրանից յետոյ էլ երկիրը չը խաղաղվեց։ Շուտով երկպառակութիւն սկսվեց առաջադիմական և ազատամիտ կուսակցութիւնների մէջ. դեռահաս Ալէքսանդրը (16 տարեկան)—գահաժառանգ հօր խորհրդով օգտվեց այդ նպաստաւոր հանգամանքից, պալատական զօրքի օգնութեամբ ձերբակալեց իր խնամակալներին ու մինիստրներին, արձակեց սկուպշչինան, իրան թագաւոր հրատարակեց և պահպանողականներից մի նոր մինիստրութիւն կազմակերպեց։

Ահա այդպիսի փոթորիկներով սկսվեց նրա թագաւորութիւնը, փոթորիկներով էլ շարունակվեց մինչև վերջը։ Դժգոհութիւնը ուժեղ թափով զարգանում էր։ Նա իր գագաթնակէտին հասաւ մանաւանդ այն ժամանակ, երբ Ալէքսանդր Օբրենովիչը մեծ փոփոխութեան ենթարկեց ազգային սահմանադրութիւնը, երբ որոշեց գահաժառանգ նշանակել իր տատանուն՝ Դրագա թագուհու եղբօրը։

Իսկ թէ ինչ եղաւ այդ դժգոհութեան հետևանքը—դա յայտնի է հեռագիրներից։ Դաւադիր կուսակցութիւնը ժողովրդի շահերն ու իրաւունքները պաշտպանելու համար զոհեց թագաւորի, թագուհու և նրանց մերձաւորների կեանքը։ Իսկ սկուպշչինան միաձայն ընտրութեամբ սերբիական գահը յանձնեց հռչակաւոր Կարագէօրգիեվիչների ժառանգին՝ Պետար Կարագէօրգիեվիչին։

Այժմ նրանից է կախված Սերբիայի ապագայ բաղդը։

Ե. Թ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Fremdenblatt» հաղորդում է բէլգրադեան կօնակում տեղի ունեցած գիշերային դրամայի մանրամասնութիւնները։ Մթութեան մէջ երկար որոնելուց յետոյ, դաւադիրները գտան արքայական զոյգին վարագուրապատ որմախորշի մէջ։ Թագաւորը դուրս եկաւ, և Միչիչ դիմելով նրան՝ ողողակեց. «Ալէքսանդր Օբրենովիչ, հրաժարվիր գահից»։ Թագաւորը պատասխանեց բառացի. «Գնանք ձեզ հետ, եթէ ազնիւ խօսքով կը պարտաւորվէք, որ մենք ողջ կը մնանք»։ Այն ժամանակ դաւադիրները աղաղակեցին. «Առաջ», քեզ հետ բանակցութիւններ չը կան»։ Ալէքսանդր թագաւորը չէր կամենում թողնել սարսափից դողացող Դրագային։ Բայց նրան դուրս քաշեցին դէպի սենեակի մէջտեղը։ «Հրաժարվիր»—շարունակում էին պահանջել դաւադիրները։ Թագաւորը լռում էր։ Հինգ օֆիցէրներ սկսեցին գնդակահար անել թագաւորին. մնացածները հետևեցին նրանց օրինակին։ Գնդակահար եղած՝ Ալէքսանդր Օբրենովիչ ընկաւ. մէկ րոպէից յետոյ սպանվեց և թագուհին։ Դրագա թագուհու քոյրերին, արտաահման ուղևորվելուց առաջ, թոյլատրեցին հրաժեշտ տալ հանգուցեալ արքայական զոյգի մարմիններին։

—Բէլգրադից հեռագրում են Բերլինի լրագիրներին, որ աւստրիական դեսպանը պահանջեց անպայման պահպանել օտարազգիների ապահովութիւնը, սպառնալով, որ եթէ չի կատարվի իր պահանջը, աւստրիական զօրքեր բերել կը տայ։

—«Daily Mail» լրագրին աղողվեց տեսնվել Ժրնէվում իշխան Պետար Կարագէօրգիեվիչի հետ։ Ահա թէ ինչ ասեց նրան իշխանը. «Յայտնեցէք բոլորին, ծանուցէք տմբողջ աշխարհին, որ ես ոչ մի մասնակցութիւն չունեմ արքայական զոյգի սպանութեան մէջ,—մի սպանութեան, որ ես հաստատում եմ զզուելի յանցանք։ Կարծես թէ չէր կարելի կանխաւորել թագաւորին և թագուհուն և արտաահման աքսորել նրանց։ Նպատակին հասած կը լինէին նոյն չափով։ Փառք Աստուծու, մենք իսօ XV-րդ դարում չենք ապրում»։

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

Վաղուց է, որ Խաչիկեանին չէի տեսել ուրախ տրամադրութեան մէջ։ Նա ժպտաց և ամուր սեղմեց իմ ձեռքը։

—Ի՞նչ կայ, բարեկամ, հարցրի ես, տրամադրութիւնդ լաւ է։

—Ինձ վրա լաւ տպաւորութիւն թողեց իմ կարդացած մի փոքր լուրը, պատասխանեց նա։

—Ի՞նչ լուր, հետաքրքրվեցի ես։

—Մի լուր, որ վերաբերում է մի հեռաւոր քաղաքի, այն է Օդեսային. բայց որը կարող է վերաբերել և մեզ։

Խաչիկեանը տուեց ինձ լրագրի համարը։

—Կարդացէք այս կտորը, առաջարկեց նա։ Ես կարդացի հետևեալը.

«Օդեսայի նոր քաղաքապետ գեներալ Արսենիևի, ընդունելով հրէաների պատգամաւորութիւնը, խնդրեց հաղորդել հրէական հասարակութեանը, որ կառավարութիւնը համահաւասար կերպով հոգում է պետութեան բոլոր հպատակների բարգաւաճման և բարօրութեան մասին։ Քաղաքապետը խնդրեց պատգամաւորութիւնից հանդատացնել հրէական ազգաբնակութիւնը, որ յուզված է Քիշինևի տխուր եղելութիւնների պատճառով և յայտնել նրան, որ ամեն տեսակ միջոցներ են ձեռք առնված հակահրէական շարժման ամենափոքր փորձերն անգամ իր սաղմի մէջ չքացնելու և ուրեմն թող Օդեսայի հրէաները այդ բանի վերաբերութեամբ լինեն բոլորովին հանգիստ։ Քաղաքապետի այդ յայտարարութիւնը շատ նպաստաւոր տպաւորութիւն արեց Օդեսայի հրէական հասարակութեան վրա և յուզված մրտքերը հանգստացան։

—Ահա այդ լուրն էր, վրա բերեց Խաչիկեանը, որ ինձ վրա շատ լաւ ազդեց։ Միթէ հաճելի երևոյթ չէ ձեր կարդացածը։ Միթէ իրաւունք չունէի ես առանձնապէս նրա վրա կանգ առնելու։

—Անկասկած, յայտնեցի ես. ահա այդ տեսակ հաւաստիացումները կարող են զսպել օտարակերների կրքերը և սթափեցնել կուրացած ազգամոլներին։

—Երբ կարդացի լուրը, շարունակեց Խաչիկեանը, ինքս ինձ մտածեցի. ոհ որքան շատ թիւրիմացութիւնների, անախորժութիւնների ու ընդհարումների առաջն առնված կը լինէր, եթէ իրաքանչիւր մարդ, լինի դա պաշտօնական անձ, թէ կրթված քաղաքացի, ամեն տեղ խօսէր փոխադարձ հանդուրժողութեան մասին և բողոքէր խորութիւնների դէմ։

—Իսկ իրական կեանքում, դժբաղդաբար, աւելացրի ես, մենք յաճախ տեսնում ենք, որ մարդիկ չեն քաշվում ազգատեացութիւն սերմանելու և մի տեսակ պարծանքով ընդգծում են իրանց ատելութիւնը դէպի ազգերը և կրօնները, իբրև մի արժանիք, իբրև խրախուսանքի վայել մի յատկութիւն...

—Ահա ինչու թանգ է Օդեսայի նոր քաղաքապետի այդ յայտարարութիւնը և ահա ինչու մի փոքրիկ լուր ստացաւ իմ աչքում այնքան մեծ նշանակութիւն։

—

Սակայն մեր տրամադրութիւնը փոխվեց, երբ մենք խօսք բաց տրինք օրվայ մի չարիքի մասին։

—Լսել ք արդեօք, հարցրեց Խաչիկեանը, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան գլխին նորից ամպեր են կիտվում։

—Այո, լսել եմ։

—Ինձ ասացին, որ առաջնորդը նորից հարց է յարուցել տեսչի մասին և առաջարկում է հոգևորական տեսուչ ընտրել դպրոցի համար։

—Նոյն էլ անցեալ տարի էր։

—Այո, յայտնեց Խաչիկեանը, առաջնորդը ուզում է վերջապէս ապացոյցներ տալ, թէ նա ինչ գոյնով է ուզում գործել Էջմիածնից վերադառնալուց յետոյ։

—Երբ մի հինգ ու կէս ամիս օրանից առաջ նա մուտք գործեց Թիֆլիս, նա ասում էր ամենքին, որ նա այժմ շատ բաների մասին ուրիշ գաղափար ունի և կապացուցանէ, որ նա կարող է ժողովրդի լաւագոյն յոյսերին բաւարարութիւն տալ։ Սպասում էինք, սպասում ապացոյցներին։ Այժմ տոպրակը բացվում է և մենք պէտք է մի շարք պերճախօս ապացոյցների ականատես լինենք։

—Իսկ մէջտեղից ինչ է դուրս գալիս, բացագանչեց Խաչիկեանը, որ տոպրակի մէջ միայն հին կապերտներ են մնացել և նրանք նոյն իսկ չեն կարկատված փոքր ի շատէ հմուտ կերպով, որ գոնէ պատռուածքները և ծուէները չափազանց աչք չը ծակեն իրանց տգեղութեամբ։ Ցիշեցնեմ ձեզ մեր անցեալից մի դէպք։ Բաղդասար միտրոպոլիտը մի ժամանակ հաւատացնում էր շուշեցիներին, որ նա փոխվել է հիմովին «էլ էն չըմ, էլ էն չըմ» աղաղակում էր, բայց ոչ ոք չէր հաւատում և իրականութիւնը հաստատեց, որ «ընա էլի էն ա էն»։ Առակի միտքը ձեզ համար հասկանալի է։

Խաչիկեանը սկսեց պատմել Բաղդասար միտրոպոլիտի և հռչակ ստացած Հաթամի կեանքից եղելութիւններ, որոնք սակայն չեն կարող իմ այսօրվայ «Մանրանկարի» նիւթ լինել։

Վրթին

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱՑՈՒԹԻՒՆԻՑ

6 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունիսի 6-ին, սերբիական թագաւորի և թագուհու մահվան ինոներորդ օրը, Կազանսկի տաճարում հոգեհանգստեան պատարագ մատուցվեց և հոգեհանդիստ կատարվեց։

ՏՕՄՍԿ։ Մարինսկայա տայգայում, Բէրիկումօ գետով, Տօմսկի նահանգում, Խատիմսկու հանքում գտնված է մինչև երեք արշին զօրութիւն ունեցող երակ. 400 պուդ լուանալուց յետո ստացվեց 8-ից մինչև 14 ֆունտ ոսկի։

ԲԷՐԴԵԱՆՍԿ։ Բէրդիանսկի ցեխաբուժարանը և կումիսային հիմնարկութիւնը բացված են։ Հիւանդները օրից օր գալով շատանում են։ Ծովային և լիմանային լողումները սկսվեցին։ Ջրի տաքութիւնն է 22° Ռէօմիւրի։ Եղանակը գեղեցիկ է։

ՇԱՆԳՀԱՅ։ Որովհետև ամէրիկական և եապոնական լիազօրները, որոնք խորհրդակցում էին առևտրական դաշնագիրների մասին Զինաստանի հետ, բողոքեցին բանակցութիւնները Շանգհայից Պէկին փոխադրելու դէմ, ուստի

չինական արտաքին գործերի մինիստրությունը զիջեց նրա պահանջներին։

ՋԷՄԼԻՆ։ Ճանապարհ ընկան՝ պատգամաւորությունը Ժընէվ և Դրագա Թագուհու քոյրերը—Վիէննա։

Կ. ՊՕԼԻՍ։ Ասում են, որ Նաչէվիչի Կ. Պոլսում գտնված ժամանակ անգլիական կառավարության կողմից խորհուրդ տուեցին Բ. Դրան համաձայնություն կայացնել Բոլգարիայի հետ մակեդոնական շարժումը խաղաղացնելու վերաբերմամբ։ Թիւրքերը չը հետեւեցին այդ խորհրդին այն պատասխանությունների պատճառով, որ յանձն են առած Ռուսաստանի և Աւստրո-Ունգարիայի վերաբերմամբ, նոյնպէս և այն երկիւղի պատճառով, որ զիջումները չեն կանգնեցնի կոմիտէների գործունէությունը, այլ ընդհակառակը կը յարուցանեն աւելի ևս եռանդուն գործունէություն։

ԲԵԼԳՐԱԴ։ Ամբողջ Սերբիայի մէջ զայրոյթով բողոքում են այն լրագիրների ինսինուացիաների դէմ, որոնք տքնում են մեղադրել ներկայ կառավարության մի քանի անդամներին մայիսի 29-ի անցքերին մասնակցելու մէջ։ Միակ պատճառն էր սերբական զօրքի զայրոյթը՝ ի նկատի ունենալով թագուհու եղբօրը ժամանգ հրատարակելու առաջիկայ փորձերը—Ցունիսի 6-ին այժ է սահմանում 1888 թի սահմանադրությունը սկուպշչինայի փոփոխություններով։ Այդ փոփոխությունների համաձայն, կարագէօրգիեվիչների դինաստիան յայտարարված է թագաւորող դինաստիա։ Թագաւորին կը ժառանգէ աւագ որդին։ Նախկին դինաստիայի արտօնությունները չնչված են։ Սկուպշչինայի ընտրողները սերբական այն քաղաքացիներն են, որոնք վճարում են 15 ֆրանկ ուղղակի հարկեր։ Մինիստրները պատասխանատու են մինչև անգամ այնպիսի գործողությունների համար, որ կատարված են թագաւորի հրամանով, և իրաւունք չունեն սահմանադրության հակառակ ոչ ոքից հրամաններ ընդունել։ Թագաւորը իրաւունք չունի ներումն շնորհել այն մինիստրներին, որոնք դատապարտված են սահմանադրությունը խախտելու համար։ Թագաւորը կը ժամանէ չորեքշաբթի առաւօտեան։

ԺԸՆԷՎ։ Պետեր թագաւորը յունիսի 5-ին ընդունեց զինուորական սվիտան, որը ճաշի հրաւիրվեց։ Թագաւորի ուղևորությունը վերջնականապէս նշանակված է երկուշաբթի։

ԲԵԼԳՐԱԴ։ Ցունիսի 4-ին սկուպշչինայի և սենատի կողմից ընդունված փոփոխությունները հաղորդվեցին թագաւորին և հաւանություն գտան նրանից։ Կառավարությունը կը գործադրէ նոր սահմանադրությունը յունիսի 6-ից։ Ժամանելուց յետոյ թագաւորը երդում կը տայ։

ԲԵՐԼԻՆ։ «Frankfurter Zeitung» լրագրի հաղորդած տեղեկության համեմատ, Նաչէվիչի ուղևորության հետևանքը պլատոնական բնաւորություն ունի։ Նա գտաւ սուլթանին աւելի բարեկամաբար տրամադրված, քան սպասում էր և համարում է նրան Բոլգարիայի միակ բարեկամը թիւրքերից։ Սուլթանը յայտնեց, որ կիրագործէ ռուս-աւստրիական ըէֆորմներին վերաբերեալ վճիռը և յօժարությամբ աւելի էլ հեռու կերթայ, հէնց որ Մակեդոնիան կը հանգստանայ։ Նաչէվիչ կարծում է, որ իր միջնորդական դերը դեռ ևս վերջացած չէ. մեծ-վեզիրը հրաւիրեց նրան երկու ամսից յետոյ նորից գալ Թիւրքիա։ Դեսպանները բարենորոգական գործունէության սկզբնական պայմանն են դնում Մակեդոնիայի խաղաղացումը. մինչև անգամ ըէֆորմների գործին ուղղակի չը մասնակցող պետությունների ներկայացուցիչները ուղղակի խոստացան Նաչէվիչին պնդել այդ դէպքում ոչ միայն իրագործման, այլ և ըէֆորմների ընդարձակման վրա։

ԲԵԼԳՐԱԴ։ Դրագա թագուհու քոյրը՝ տիկին Պետրովիչ յայտնեց իր իրաւունքները՝ թագուհու գոյքը որոնելու համար։

7 յունիսի

ՄՕՍԿՎԱ։ Սլաւոնական ընկերության մէջ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց սերբական արքայական զոյգի համար։

ԲՈՐԺՕՄ։ Բուժական սեզոնը բացվում է յունիսի 9-ին։ Սկսել են հաւաքվել ամարանոց եկողները և բժիշկներ։ Բորժոմի հանքային ջրերի արտահանությունը մեծ աճողություններ ունի։

ՊԱՐԻԶ։ Սերբական թագաւորի հաշտությունը ընտանիքի աւագ դծի անդամների հետ հաստատվում է։

ՎԻԷՆՆԱ։ Կոմս Տիսսա և բարոն Ֆէյերվարի ժամանեցին այստեղ։

ԲՈՒԴԱՊԷՇՏ։ Հաղորդում են, որ Տիսսա հրաժարվեց մինիստրություն կազմելու յանձնարարությունից։

ՊԱՐԻԶ։ Իտալական դեսպանը յայտնեց, որ իտալական թագաւորի պարիզեան ճանապարհորդությունը քաղաքավարության մի ակտ է։ Թագաւորին կուղեկցէ արտաքին գործերի մինիստրը, որպէս զի ճանապարհորդությունը պաշտօնական բնաւորություն կրէ։ Ներկայումս Ֆրանսիայի և Իտալիայի միջև չը կան լուծման կարօտ հարցեր։ դիպլոմատիական դժուարություններ չը կան նոյնպէս Տրիպոլիսի հարցի վերաբերմամբ։

ՍՕՖԻԱ։ Նաչեվիչ վերադարձաւ երէկ և կառավարությանը հաշիւ ներկայացրեց իր միսսիայի մասին։ Նա յայտնեց, որ Բ. Դուռը կը ձգտէ բարեբաղձություններ մտցնել մակեդոնացիների վիճակի մէջ։ Մեծ ըէֆորմներ մտցնելու համար Բ. Դուռը պահանջում է նախապէս խաղաղացնել երկիրը։ Նաչեվիչ հրաւիրված է սուլթանից կրկին այցելել Կ. Պոլիսը կառավարող շրջանների հետ կարծիքների փոխանակությունից յետոյ։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԱԼԱԹԱՐ
Հաստատակիցներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԻԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՑՈՑ ԿՕՍԻՍՏՕՐԻԱՑԻ ՀԱՄԱՐ
ՀԱՐԿԱՒՈՐ Է ԱՏԵՆԱԴՊԻՐ

Ցանկացողները թող խնդրագրով դիմեն Կոնսիստորիայիս։ Դիմողները պարտաւոր են իմանալ հայերէն և ռուսերէն։

Անդամ Կոնսիստորիայի՝
1—6 Թադէոս քահ. Կորժենեան

Լոյս տեսաւ
Ե. ԼԱԼԱՑԵԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ
Ա.
ՄՕԼԼԱ ՆԱՍՐ-ԷԴ-ԴԻՆ
Գինն է 25 կոպ.
Բ.
ՀՈԲՈՍ
Գինն է 5 կ.

Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում։ 1—3

ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ

դրախանութում վաճառվում են
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՑՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան 10 կ.
2) Մահմէդ՝ » » » 7 »
3) Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. 5 »
4) Սահակ Պարթև՝ » » » 5 »
5) Հաուպման՝ » » » 15 »

Շուտով լոյս են տեսնելու՝ 1) Ղևոնդ Երէց. 2) Զրադաշտ. 3) Վարդան Մամիկոնեան։

Պատրաստ է տպագրության համար՝ 1) Ընտրության կաթնատուների՝ Գ. Մեծատուրեանի։ Պատրաստվում են նոր հրատարակություններ։ 1—3

Դիմել՝ Книжный магазинъ „Гутенбергъ", (Дворцовая) Галустяну. 1—3

ԲԺՇԿԱԳԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
Նախկին օրդինատոր «Ս. Պետերբուրգի Աչքաբուժական Հիւանդանոցի»
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ընդունում է աչքի հիւանդություն ունեցողներին ամենայն օր.
Առաւօտեան ժամի 9-ին մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Հասցէն. Վելիամինովսկայա փ. տ. № 8։
5—10

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երկրորդ հատոր

(551+VIII երես, 13 պատկերով)

Բովանդակություն.—1) «Մշակի» առաջին տարիները (1872—1876).—«Նշանաւոր Շրջան» (1876—1878, Արևելեան հարց, ռուս-թիւրքական պատերազմ)։

Այս հատորը կուղարկվի միայն այն բաժանորդներին, որոնք լիովին վճարել են իրանց բաժանորդագինը։ Մաս-մաս վճարող բաժանորդներին խնդրում ենք ուղարկել իրանց վրա մնացած մասը։

Երրորդ հատորը լոյս կը տեսնէ աշնանը։

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բաժանորդագինն է երեք հատորի համար 3 րուբլի, ճանապարհածախսով 4 րուբլի։ ԿԱԶՄԱԾ 4 րուբլի, ճանապարհածախսով 5 րուբլի 20 կոպ.

Հատորները առանձին-առանձին չեն ծախվի։ Բոլոր երեք հատորները լոյս տեսնելուց յետոյ, գինը կը բարձրացնվի։ Վերադիր վճարով և մաս-մաս բաժանորդագրություն չէ ընդունվում։

Թիֆլիսում բաժանորդ գրվել կարելի է. 1) Հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը և 2) «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։

Օտար քաղաքացիները դիմում են. Тифлисъ, Редакція «Мшакъ»։

ԲԱԳԻՈՒՄ բաժանորդ կարելի է գրվել պ. Գրիգոր Տէր-Յովհաննիսեանի մօտ, Ա. Մատուրովի գրասենեակում և «Պրոմէթէուս» գրավաճառանոցում։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԹԱՏԵՐԱՍԷՐՆԵՐԸ

հրաւիրվում են ապագայ սեզոնի գործունէության մասին խորհրդակցելու Ժողովարանի ամառային ընակարանում կիրակի, յունիսի 8-ին, առաւօտեան ժամը 10-ին։

Խնդրվում է նաև նոր սիրողներին՝ որոնք կը ցանկանան մասնակցել այդ խմբի ներկայացումներին ապագայում՝ ներկայ գտնվել այդ խորհրդակցությանը։ 3—3

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ՆԱԳԼԷՔԱԳԱ"

ծովային, գետային և ցամաքային ապահովագրության, ապրանքների անդրադարձության և դրամերը կրակից ապահովագրելու համար։

ՀԻՄՆՎԱԾ Է 1847 ԹՎԻՆ

Հիմնական դրամագլուխը . . . . . 1,650,000 րուբլի
Պահեստի դրամագլուխը . . . . . 2,664,808 »

I. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

Աւելի քան 800 գործակալություններ եւրոպական Ռուսաստանի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի եւ հեռաւոր Արևելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս եւ ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում։

Տեղափոխությունն ամեն տեսակ բեռների եւ իրերի, որոնց ընդունելությունը եւ յանձնումը կատարվում է թէ տանը եւ թէ պահեստներում եւ խանութներում։

Յանձնումն բեռների ուղարկիչների կողմից առաջնորդված պայմաններով (վերադիր չնորհ ի հաշիւ ուղարկողների, դրամի փոխադրություն (переводъ) բեռները յանձնելու տեղը նշանակելու համար եւ այլն)։

Անապահովությունն բեռների արտաքին պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահեստներում, որի համար չատ էժան կէսերում կան ընդարձակ պահեստներ, յատկապէս բեռներ պահելու համար։

II. ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Սեփական մարդատար, ապրանքատար եւ ձգող շոգենաւեր, ծովային եւ գետային նաւեր (70 նաւ.)։

Բեռնակիր եւ մարդատար նաւերի պարբերական հաղորդակցությունն Վոլգա գետի բոլոր նաւահանգիստների մէջ, Բիբիեակից մինչեւ Աստրախան եւ Կասպից ծովի բոլոր նաւահանգիստների մէջ, Աստրախանից մինչեւ Պարսկաստանի ափերը։

Ամենաշտապագնաց պահեստներ Նիժնիում (սիբիրյական նաւամատույցի վրա), Աստրախանում, Բաքւում եւ Կրասնովոդսկում։

Բեռները անընդհատապէս ուղարկելու համար ընկերությունն շոգենաւագնացությունը համատեղությունն է կապել երկաթուղիների հետ։ Այն ապրանքների տեղափոխության համար, որոնք ուղարկվում են Ռուսաստանից Պարսկաստան եւ Պարսկաստանից Ռուսաստան, գոյություն ունի տարանցիկ արտօնագրությունն, համաձայնություն Պարսկական ապահովագրական եւ տեղափոխության ընկերության հետ։

III. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ.

ա) Ապահովագրություն բեռների, որոնք տեղափոխվում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհներով (ծովերով և գետերով)։
բ) Ապահովագրություն կրակից ամեն տեսակ դոլերի։
գ) Ապահովագրություն ամեն տեսակ դժբաղդ դեպքերից հանապարհին ամեն տեսակ նաւերի, շոգենաւերի, առագաստանաւերի, վագոնների և վագոն-ցեռներների։
դ) Ապահովագրություն թանգագին իրերի և արժէքաւոր դոլերի, որոնք ուղարկվում են պօստով, ցամաքային և ծովային հանապարհներով, համաշխարհային պօստային դաշնակցության բոլոր կէսերի մէջ։
Ապահովագրություններ ընդունվում են ինչպէս վարչության, այնպէս էլ ամեն տեղ ընկերության բոլոր գործակալությունների մէջ։
Բացի տեղափոխությունից պարապող գործակալություններից, կրակից ապահովագրելու գործերով մասնաւորապէս զբաղվում են էլի աւելի 350 գործակալություններ։
Ս. Պետերբուրգի մասնաճիւղ ընկերության վարչությունը գտնվում է Ս. Պետերբուրգում, Ադմիրալտեյսկի պրոսպեկտի վրա, № 10-բորդ տունը։
Լիազօրներ—ծովային շոգենաւագնացության համար՝ Բաքւում, գետային շոգենաւագնացության համար՝ Նիժնի-Նովգորոդում։
Թիֆլիսի գործակալությունը—Տիզգոմսկայա փողոցի վրա, վրաց ազնուականների տունը։ Տելեֆոն № 108
(Ե. տ. 4.) 90—120

СѢВЕРЪ

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1903 ГОДЪ НА XVI-ый годъ изданія XVI-ый

Въ 1903 году гг. подписчики получатъ БЕЗПЛАТНО 24 КНИГИ СОБРАНІЯ СОЧИНЕНІЙ Вс. С. Соловьева,

автора историч. роман. „Сергѣй Горбатовъ", „Вольтерьянецъ" и др.
Въ каждой книгѣ отъ 112 до 240 и болѣе стран., отпечатан. на глазир. бумагѣ
— Это собраніе сочиненій стоитъ 15 руб. —

52 №№ роскошно иллюстрированнаго журнала, въ которомъ будетъ печататься новый интересный романъ гр. Е. А. Салиаса „Лолаевъ"; 52 №№ женед. обозрѣнія политической и общественной жизни; 12 №№ журнала „Парижскія Моды, Хозяйство и Домоводство", со множествомъ рисунковъ и полезныхъ указаній; 12 №№ выкроекъ на отдѣльныхъ большихъ листахъ.

Кромѣ всего этого, годовые подписчики получатъ БЕЗПЛАТНО большую картину проф. Ю. Ю. КЛЕВЕРА „ВЕЧЕРНЯЯ ЗАРЯ" Размѣръ картины, отпечатанной масляными красками, 12×18 верш.
Въ отдѣльной продажѣ цѣна этой картины 5 руб.

ПОДПИСНАЯ ЦѢНА: на годъ безъ дост. въ СПб.—6 р., съ дост. и перес. 7 р., на 6 м.—3 р. 50 к., на 3 м.—1 р. 75 к., за границу—11 р. РАЗСРОЧКА допускается по полугодіямъ и четвертямъ года. Подписки просятъ адресовать на имя редактора-издателя Ник. Ѳед. Мертца. (СПБ., Невскій, 120).

ГЛАВНАЯ КОНТОРА ЖУРНАЛА „СѢВЕРЪ": СПБ., НЕВСКІЙ, 120. 17—21

Дозволено Цензурою. Тифлисъ, 7 Іюня 1903 г.

Электропечатня Груз. Изд. Т—ва, Б. Ванкская ул.